 $170\frac{1}{2}$ մ, իսկ լայնությունը կազմում է լերկարության $\frac{7}{11}$ մասը:
Վորոշել պարտեզի լայնությունը:

174. Շոգեշարժը 1 կմ վազքի համար ծախսում է $148\frac{1}{5}$ լ
ջուր: Վերքան և տենտերի ջրամբարի տարողությունը, յեթե շո-
գեշարժի ամենաշատ վազքն է $141\frac{2}{3}$ կմ և անվտանգության հա-
մար պետք է ունենա յերկու անգամ ավելի ջուր:

175. Սոճե հեծանի չափերն են 6 $\frac{1}{4}$ մ \times $\frac{3}{4}$ մ \times $\frac{1}{10}$ մ, չալա-
նի լե 1 խոր. դմ չոր սոճին կշռում ե $\frac{4}{5}$ կգ. վնրքան կլշուն 15
հատ սոճե հեծանները:

176. 6 $\frac{3}{4}$ մ լերկարություն ունեցող ռելսից կտրեցին նրա
լերկարության $\frac{7}{9}$ մասը: Վորոշել կտրած և մնացած մասերի քաշը,

յեթե ամբողջ ռելսը կշռում ե 30 $\frac{1}{4}$ կգ:

177. Բանջարանոցի մակերեսը հավասար ե $\frac{2}{5}$ հա. Իւ Այդ
բանջարանոցի $\frac{1}{4}$ ը քանի հեկտար ե անում. $\frac{3}{8}$ ը:

178. Դալար խոտը չորացնելիս կորցնում ե իր քաշի $\frac{2}{3}$ ը:

Ե $\frac{1}{4}$ ս դալար խոտից ինչքան չոր խոտ կտապվի:

179. Գնել են 7 $\frac{1}{2}$ մ գործվածք, մետրը $5 \frac{1}{2}$ ռուբլով, իսկ 5 մ,
Տ $\frac{3}{4}$ ռուբլով: Ի՞նչ արժել ամբողջ գործվածքը:

180. Յերկու քաղաքների միջի հեռավորությունը հավասար
է 680 $\frac{1}{2}$ կմ: Այդ քաղաքներից իրար հանդեպ դուրս են դալիս
յերկու գնացքներ: Առաջինի արագությունն ե 1 ժամում $30 \frac{1}{2}$ կմ
իսկ յերկրորդինը՝ $38 \frac{1}{4}$ կմ: $2 \frac{1}{3}$ ժամ հետո ինչքան կլինի հեռա-
վորությունը նրանց միջև:

181. Վճրքան ե կշռում՝ գնդացըի ժապավենով լցված
տուփը, յեթե յուրաքանչյուր փամփուշտ կշռում ե $25 \frac{1}{2}$ դր, դա-

տարեկ ժամապիհնը՝ $\frac{9}{10}$ կգ, տուփը՝ $1\frac{1}{5}$ կգ և գնդացրի ժապավենը
ոլարունակում ե 250 գրամիուշ:

182. Յերեք խմբի աշակերաններին տվին 720 թերթ թուղթ:

Առաջին խմբին ավելին ամբողջ թղթերի $\frac{2}{5}$ -ը, ինը՝ խմբին՝
մնացածի $\frac{5}{6}$ -ը, իսկ յերրորդին՝ մնացածը: Յուրաքանչյուր խմբին
լինչքան թերթ թուղթ արվեց:

Կառուկների
բաժանումը

183. $\frac{4}{5}$ մ-ը բաժանել 2 մասի:

184. $\frac{4}{5}$ կգ-ը բաժանել 3 մասի:

185. $\frac{5}{6}$ -ը փոքրացնել 2 անգամ. $7\frac{1}{2}$ -ը 3 անգամ:

186. Գտնել այն թիվը, պոր $4\frac{3}{8}$ -ից 7 անգամ փոքր ե:

187. $\frac{7}{9}$ -ը 14-ից քանի՞ անգամ փոքր ե:

188. $1\frac{5}{11}$ -ը 16 մեջ քանի՞ անգամ ե պարունակում:

189. Կազմել մի խնդիր, վոր լուծելիս պահանջվի $\frac{24}{25}$ -ը բա-
ժանել 8-ի վրա:

190. Կազմել մի խնդիր, վոր լուծելիս պահանջվի 64 ոռու-
թին բաժանել $\frac{3}{8}$ -ի վրա:

191. Գառնել քանորդեւ

1) $\frac{8}{11} : 4 \frac{4}{5}$	2) $\frac{8}{9} : 4$	3) $18 : \frac{54}{61}$	4) $15 : \frac{4}{15}$	5) $\frac{35}{48} : \frac{21}{32}$
$\frac{10}{17} : 2$	$\frac{7}{16} : 6$	$24 : \frac{4}{9}$	$4) 18 : 2 \frac{1}{4}$	$\frac{17}{30} : \frac{7}{10}$
$\frac{27}{8} : 9$	2) $\frac{12}{25} : 3$	$32 : \frac{24}{25}$	$10 : 1 \frac{7}{8}$	6) $1 : 1 \frac{1}{2}$
$\frac{9}{11} : 3$	$\frac{7}{9} : 14$	$15 : \frac{5}{7}$	$35 : 2 \frac{4}{5}$	$2 : 3 \frac{1}{3}$
$\frac{3}{5} : 2$	$\frac{27}{32} : 81$	$28 : \frac{4}{7}$	$180 : 17 \frac{1}{7}$	$120 : 1 \frac{4}{5}$
$\frac{2}{3} : 5$	$\frac{18}{25} : 12$	$8 : \frac{5}{7}$	6) $\frac{5}{8} : \frac{4}{9}$	7) $175 : 8 \frac{1}{3}$
$\frac{5}{6} : 4$	$4 \frac{2}{3} : 7$	$4 : \frac{5}{9}$	$\frac{5}{8} : \frac{5}{12}$	$100 : 7 \frac{1}{7}$
$\frac{7}{8} : 7$	$7 \frac{3}{5} : 57$	$10 : \frac{7}{8}$	$\frac{7}{6} : \frac{11}{36}$	$128 : 5 \frac{1}{3}$
$\frac{3}{7} : 3$	3) $4 : \frac{2}{5}$	$6 : \frac{5}{6}$	$\frac{15}{14} : \frac{20}{7}$	$210 : 3 \frac{1}{2}$

192. Բաժանել

1) $1 \frac{2}{3} : 3 \frac{1}{2}$	4) $2 \frac{1}{4} : 1 \frac{1}{8}$	7) $12 \frac{3}{5} : 1 \frac{1}{20}$	10) $15 \frac{7}{24} : 3 \frac{7}{120}$
2) $1 \frac{1}{2} : \frac{3}{5}$	5) $14 \frac{1}{2} : 4 \frac{1}{9}$	8) $68 \frac{17}{36} : 8 \frac{1}{18}$	11) $38 \frac{19}{80} : 231 \frac{4}{5}$
3) $\frac{2}{3} : 1 \frac{1}{4}$	6) $4 \frac{3}{5} : \frac{5}{23}$	9) $20 \frac{1}{7} : 10 \frac{1}{14}$	

193. Գառնել քանորդեւ

1) $\frac{5}{6} : 7$	3) $\frac{1 \frac{1}{2}}{5}$	5) $\frac{14 \frac{3}{8}}{25}$	7) $\frac{11 \frac{1}{3} \cdot 5 \frac{1}{4}}{4 \frac{1}{4}}$
2) $5 : \frac{6}{7}$	4) $\frac{66 \frac{2}{3}}{80}$	6) $\frac{\frac{4}{5} \cdot 4 \frac{1}{4}}{3 \frac{2}{5}}$	8) $\frac{12 \frac{2}{3} \cdot 4 \frac{1}{5}}{5 \frac{1}{3}}$

$$1) \frac{4\frac{1}{12} \cdot 8\frac{6}{7} \cdot 7\frac{2}{3} \cdot 5\frac{1}{7} \cdot 7}{6\frac{1}{4} \cdot 1\frac{2}{5} \cdot 5\frac{3}{4} \cdot 3\frac{4}{9} \cdot 7\frac{1}{5}};$$

$$2) \frac{5\frac{1}{8} \cdot 3}{5\frac{1}{8} : 3} : \frac{5 \cdot \frac{6}{35}}{\frac{11}{40} \cdot 2\frac{2}{9}};$$

$$3) \frac{27\frac{3}{8} - 21\frac{7}{20}}{\left(3\frac{4}{7} - 1\frac{23}{28}\right) - \left(1\frac{47}{66} - \frac{29}{130}\right)};$$

$$4) \frac{\left(4\frac{2}{5} - 3\frac{3}{4} + 8\frac{7}{15} - 8\frac{7}{60}\right)}{4\frac{1}{4} - 2\frac{3}{4}};$$

$$5) \frac{7\frac{1}{2} \cdot 2\frac{2}{3} - 12\frac{1}{4} : \frac{7}{2}}{110 : \frac{3}{5}} + \frac{3\frac{3}{8} + 2\frac{3}{4}}{24 : 2\frac{2}{5}}.$$

195. Ցերկու թվերի արտադրյալը հավասար է $6\frac{5}{8}$ -ի. բար-մապատկիչներից մեկը հավասար է $3\frac{3}{4}$ -ի։ Գտնել յերկրորդ բար-մապատկիչը։

196. Խռնչ թվով պետք է բազմապատկել $1\frac{7}{9}$ -ը, վոր ստաց-վի՞ 1։

197. Գնացքը 200 կմ.-ի վրա ծախսում է $2\frac{4}{5}$ ժ ածուխ։ 1 կմ.-ի վրա ի՞նչքան ածուխ կծախսի։

198. Ռողղանկյունաձև հողամասի մակերեսը հավասար է $\frac{4}{5}$ քառ. կմ. Վորոշել հողամասի լերկարությունը, լեթե լայնությունը հավասար է $\frac{3}{8}$ կմ։

199. $3\frac{1}{2}$ հա գաշտից հավաքեցին 28 գ. վարսակ։ 1 հա-ից ի՞նչքան վարսակ հավաքեցին։

200. $\frac{5}{7}$ կոտորակը $\frac{5}{21}$ -ի վեր մասն է, $-\frac{7}{9}$ -ի, $-\frac{7}{36}$ -ի։

201. 1 կգ Դոնի քարածխի տված չերմության քանակը հա-

վասար և $\frac{7}{43}$ կզ Մոսկվայի քարածխի տված ջերմության քառակին: 1860 և Մոսկվայի քարածխին փոխարինելու համար քմնի առնն Դոնի քարածուխ պետք եւ:

202. $\frac{1}{2}$ մ գործվածքը գնեցին $32\frac{5}{8}$ ոռուբլով: Ի՞նչ արժեք գործվածքի մետրը:

203. Վերքան ժամանակում կարելի յեւ անցնել $7\frac{1}{8}$ կմ լեթե ժամում $4\frac{3}{4}$ կմ արագությամբ գնանք:

204. Ժամացույցները լուրաքանչյուր որ յետ են մնում $\frac{8}{4}$ րոպե: Քանի՞ որվա ընթացքում $9\frac{3}{16}$ րոպե յետ կմնան:

205. $\frac{15}{16}$ նա ըանջարանոցը քանի՞ հողամասի կարելի յեւ բառանել լեթե լուրաքանչյուր հողամասը $\frac{5}{32}$ նա լինի:

206. $7\frac{1}{2}$ մ յերկարություն ունեցող ձողից քանի՞ հատ $26\frac{1}{2}$ մմ յերկարությամբ վարսոցներ կարելի յեւ պատրաստել, լեթե յուրաքանչյուր վարսոցի համար վորովես կտորանք պետք եթողնել $\frac{3}{4}$ մմ.

207. Ներկարարը պատը ներկեց $4\frac{4}{5}$ ժամում: Մի ժամում պատի վեր մասը ներկեց:

208. Աշխատանքի $\frac{3}{8}$ մասի համար վճարեցին 123 ոռուբլի: Ամբողջ աշխատանքի համար վերքան պետք եւ վճարել:

209. Ի՞նչ թվի վրա պետք երաժանել գործությունը, վոր ստացվի $1\frac{3}{7}$:

210. Անդիվայի բնակչությունն (առանց գաղութների) մոտավորապես հավասար է 47 մին, վորը կազմում է Բըիտանա-

կան Հնդկաստանի բնակչության $\frac{4}{29}$ մասը, Ի՞նչքան բնակչություն ունի Հնդկաստանը:

211. Հրաձգության ընթացքում նպատակին խփեցին 84 գնդակ, վոր կազմում և արձակած գնդակների $\frac{7}{15}$ մասը, Ի՞նչքան գնդակ են արձակել:

212. Գնացքը $31\frac{1}{2}$ կմ անցնում է $\frac{7}{8}$ ժամում, Նրա մի ժամանակությունն ի՞նչքան եւ:

213. $\frac{1}{12}$ խոր. և փայտին վճարեցին $1\frac{1}{6}$ ռուբլի: Ի՞նչ արժեքը 1 խոր. և փայտը:

214. Զրի տակառից առաջին անգամ վերցրին $\frac{2}{5}$ մասը, առաջա մասը, վորից հետո տակառում մնաց 8 վեղրո ջուր Տակառում քանի վեղրո ջուր կար:

215. Յերկու թվերի գումարն է $17\frac{1}{2}$. Նրանցից մեկը մյուսից 5 անգամ մեծ եւ: Գտնել այդ թվերը և ստուգել ստացած պատասխանը:

216. Յերեք թվերի գումարը հավասար է $64\frac{4}{5}$ ի: Առաջնը՝ $2\frac{1}{2}$ անգամ, իսկ յերկրորդը՝ $8\frac{1}{4}$ անգամ մեծ է յերրորդից: Գտնել այդ թվերը:

217. Ի՞նչ կլինի քանորդը, իեթե բաժանելին բազմապատկենք $2\frac{2}{3}$ -ով, իսկ բաժանարարը՝ $5\frac{1}{2}$ -ով. իեթե բաժանելին բաժանենք 7 -ի վրա, իսկ բաժանարարը՝ $\frac{1}{10}$ -ի վրա, իեթե բաժանելին բազմապատկենք $\frac{3}{4}$ -ով, իսկ բաժանարարը բաժանենք $1\frac{1}{8}$ -ի վրա:

218. Յերկու թվերի արտադրյալը հավասար է 6-ի, յեթի
բազմապատկիչներից մեկին ավելացնենք $3\frac{1}{2}$, ապա արտադրյա-
լում կստանանք $14\frac{3}{4}$: Գտնել այդ թվերը:

219. Առօր։ տնտեսությունը 3 որում հավաքեց 578 հա բերք։
Երկրորդ որը հավաքեց առաջինից $1\frac{1}{2}$ անգամ պակաս, իսկ
յերրորդ որը՝ յերկրորդից $1\frac{3}{4}$ անգամ ավելի։ Քանի հեկտար հա-
վաքեց առաջին, յերկրորդ և յերրորդ որերը։

220. Գտնել x -ը՝

$$3\frac{3}{4} \cdot x = 7, \quad \frac{1}{6} : x = 6, \quad x \cdot 3\frac{5}{7} = 1\frac{6}{7},$$

$$x : 5\frac{3}{4} = 22, \quad 1\frac{5}{16} : x = \frac{3}{8}, \quad x : \frac{1}{2} = 8,$$

Կողոքակների բա-
լու գործութե-
րյակների վերա-
բերյալ խնդիրներ

221. Հետեւյալ որինակների մեջ ցուցի
արված գործողությունները կատարել.

$$1) \frac{3}{4} : \frac{5}{6} + 2\frac{1}{2} : \frac{2}{5} - 1 : 1\frac{1}{9},$$

$$2) 2\frac{3}{4} : \left(1\frac{1}{2} - \frac{2}{5} \right) + \left(\frac{3}{4} + \frac{5}{6} \right) : 3\frac{1}{6};$$

$$3) \left(\frac{2}{15} + 1\frac{7}{12} \right) \cdot \frac{30}{103} - \left(2 : 2\frac{1}{4} \right) \cdot \frac{9}{32};$$

$$4) \left(3\frac{1}{2} : 4\frac{2}{3} + 4\frac{2}{3} : 3\frac{1}{2} \right) \cdot 4\frac{4}{5};$$

$$5) 3\frac{1}{8} : \left[\left(4\frac{5}{12} - 3\frac{13}{21} \right) \cdot \frac{4}{7} + \left(3\frac{1}{18} - 2\frac{7}{12} \right) \cdot 1\frac{10}{17} \right];$$

$$6) 2\frac{3}{4} : \left[\left(4\frac{5}{7} - 1\frac{11}{14} \right) \cdot 4\frac{2}{3} + \left(3\frac{2}{9} - 1\frac{5}{6} \right) \cdot \frac{18}{25} \right];$$

$$7) \left[15 : 3\frac{3}{4} - \left(10\frac{1}{2} : 1\frac{1}{2} \right) \cdot \frac{3}{14} \right] : \left(1\frac{23}{52} - 1\frac{1}{4} \right);$$

$$8) \frac{\left(\frac{7}{15} + \frac{14}{45} + \frac{2}{9} \right) \cdot 10\frac{1}{3} - 1\frac{1}{11} \left(2\frac{2}{3} - 1\frac{3}{4} \right)}{\left(\frac{3}{7} - \frac{1}{4} \right) : \frac{3}{28} - 1};$$

$$9) \frac{\left(15 : \frac{5}{18} : 3\frac{3}{8} \right) \cdot \left(\frac{1}{16} + \frac{11}{36} + \frac{5}{48} + \frac{5}{18} \right)}{\left(11\frac{5}{11} - 8\frac{21}{22} \right) : 1\frac{2}{3}}.$$

222. Գտնել այն թիվը՝ զորի $\frac{3}{7}$ -ը հավասար է 5-ի:

223. Գտնել այն թիվը, զորի $\frac{4}{5}$ -ի հինգ իններրորդ մասը հավասար է 28-ի:

224. Վեր թիվը պետք է բաղմապատկել $\frac{5}{9}$ -ով, զորպեսզի ստացվի $\frac{1}{2}$ թիվը:

225. Վեր թիվը պետք է բաժանել $\frac{2}{3}$ -ի վրա, զորպեսզի ստացվի $\frac{3}{4}$ թիվը:

226. Յեթև անհայտ թվի $\frac{2}{7}$ -ին ավելացնենք 162, ապա կստանանք նույն թվի $\frac{5}{7}$ -ը: Գտնել անհայտ թիվը:

227. Յեթև անհայտ թվի $\frac{7}{15}$ -ին ավելացնենք 119, ապա կստանանք նրա $\frac{3}{4}$ -ը: Գտնել անհայտ թիվը:

228. Յեթև գործարանի բանվորների թվի $\frac{2}{7}$ մասին ավելացնենք նրանց $\frac{2}{3}$ մասը, ապա կստանանք 5200 մարդ: Քմնի բանվոր կա այդ գործարանում:

229. Գործարանում քմնին հոգի յեն աշխատում, լեթև ամբողջ բանվորների $\frac{5}{12}$ -ը կազմում են կանաչ՝ $\frac{1}{3}$ -ը՝ տղամարդիկ, իսկ մացած 288 հոգին անշափահասներ են:

230. Ալժմ վեր ժամն ե, լեթև լրիվ որվա մնացած մասը $6 \frac{1}{2}$ անգամ փոքր է անցած մասից:

231. Անհայտ թվի $\frac{5}{19}$ -ի տարբերությունը հավասար է 518-ի: Գտնել այդ թիվը:

232. Տուրիստը լերկու քաղաքների միջի հեռավորությունն անցավ լերկու որում։ Առաջին որն անցավ ամբողջ ճանապարհի $\frac{1}{2}$ -ը և ելի 24 կմ, իսկ լերկորդ որը՝ Յ անգամ քիչ։ Դանել լերկու քաղաքների միջի հեռավորությունը։

233. Տուրիստն անցնելով ամբողջ ճանապարհի $\frac{8}{10}$ -ը տեսավ, զոր մինչև ճանապարհի կեսը նրան մնում և անցնելու ելի և $\frac{1}{2}$ կմ։ Դանել ամբողջ ճանապարհի լերկարությունը։

234. Մի թվից, վորի $\frac{1}{2}$ -ը հավասար երես $\frac{5}{7}$ -ի, հանել այն թիվը, վորի $\frac{2}{3}$ -ը հավասար ենույնպես $\frac{5}{7}$ -ի։

235. Անհայտ թվի $\frac{23}{24}$ -ը 5 $\frac{3}{4}$ -ից 1 $\frac{11}{12}$ -ով մեծ է։ Դանել անհայտ թիվը։

236. Աշխատանքի $\frac{3}{4}$ -ը կատարելու համար անհրաժեշտ է մի ժամ ժամանակ։ Ամբողջ աշխատանքը կատարելու համար վորքմն ժամանակ պետք է։

237. Տուրիստն անցավ ամբողջ ճանապարհի $\frac{8}{9}$ մասը, վորից հետո մնաց անցնելու ելի $\frac{1}{2}$ կմ։ Վերքան եր ամբողջ ճանապարհը։

238. Շոգեշտրժ արտադրող գործարանը կատարեց ամբողջ պատվերի $\frac{4}{5}$ մասը, վորից հետո նրան մնաց եր արտադրելու 82 շոգեշտրժ։ Ընդամենը քմնի շոգեշտրժ եր պատվիրված։

239. Մի դպրոց ունի 4 խումբ։ I խմբում սովորում են ամբողջ աշակերտության $\frac{1}{5}$ մասը, II խմբում՝ $\frac{8}{10}$ -ը, III խմբում՝ $\frac{1}{4}$ -ը, իսկ IV խմբում՝ 40 հոգի։ Վորոշել դպրոցն ընդամենը.

քանի՞ աշակերտ ունի և յուրաքանչյուր խմբում քանիսն են սուվորում:

240. Յեթե անհայտ թիվը մեծացնենք նրա $\frac{3}{11}$ մասով, ապա սուցած թիվը $\frac{5}{7}$ ը հավասար է 70-ի, Գտնել անհայտ թիվը:

241. Յեթե անհայտ թիվին ավելացնենք նրա $\frac{3}{4}$ ը և ելի 40, ապա կստանանք 180: Գտնել անհայտ թիվը:

242. Տուրիստն անցավ մի քաղաքից մյուս քաղաքը: Առաջին որն անցավ ամբողջ ճանապարհի $\frac{3}{17}$ մասը, լերկորդ որը $\frac{1}{6}$ մասը, վորից հետո մնաց անցնելու ելի 182 կմ: Քանի՞ կիլոմետր եր ալիք քաղաքների հեռավորությունը միմանցից:

243. $8 \frac{3}{4}$ մ սատինի համար վճարեցին 14 ռուբի: Նույն տեսակի 15 մ սատինի համար ինչքան պետք է վճարեն:

244. Տրակտորը մի բանվորական որում (8 ժամ) կարող է վարել $3 \frac{1}{2}$ հա: $\frac{3}{4}$ բանվորական որում քանի հա կվարի:

245. Գնացքը 150 կմ անցնում է $3 \frac{3}{4}$ ժամում: $6 \frac{1}{4}$ ժամում քանի՞ կմ կանցնի:

246. $7 \frac{1}{2}$ մ լերկարություն ունեցող սելազ բաժանել են լերկու մասի, վորոնցից մեկը մյուսից $4 \frac{5}{6}$ մ-ով կարճ եւ: Գտնել յերկու մասերի յերկարությունը:

247. 10 հոգուց բաղկացած բրիգադան ցանեց 50 հա: 1 հա ցանելը գնահատվում է $\frac{3}{10}$ աշխար: Բրիգադի ամեն մի անդամին քանի՞ աշխար և հասնում:

248. Ուղղանկուն հողամասի լերկարությունը հավասար է 175 մ, իսկ լայնությունը՝ կազմում է լերկարության $\frac{3}{4}$ մասը:

Այդ հողամասի՝ $\frac{7}{20}$ մասը ցանելու համար ի՞նչքան սերմ պետք է,

յեթե 1 քառ. և համար պահանջվում է $3\frac{1}{5}$ գր սերմ:

249. Կոռպերատիվը ծախեց 3 կտոր մանուֆակտուրա: Առաջին կտորը 180 և եր, յերկրորդ կտորում յեղած մետրերի քանակը կազմում եր առաջինի $\frac{11}{12}$ մասը, իսկ յերրորդ կտորի մետրերի քանակը հավասար եր առաջին և յերկրորդ կտորների մետրի քանակի $\frac{8}{15}$ մասին: Այդ կտորները ծախելուց ի՞նչքան ստացան, յեթե առաջին կտորի մետրը ծախեցին $2\frac{1}{2}$ ռուբլով, յերկրորդ կտորինը՝ $2\frac{2}{5}$ ռուբլով, իսկ յերրորդին՝ $2\frac{1}{10}$ ռուբլով:

250. Յերկու արկղում ընդամենը կար $38\frac{1}{4}$ կգ. մեխ: Յեթե մի արկղից վերցնենք $4\frac{3}{4}$ կգ և լցնենք մյուսի մեջ, ապա յերկու արկղում ել կլինի հավասար, յուրաքանչյուր արկղում քանի կիլոգրամ մեխ կար:

251 Գնացքը քտնի ժամում կանցնի 678 կմ տարածությունը, յեթե մի ժամում միջին թվով անցնում է $28\frac{1}{4}$ կմ և յեթե յերեք կալարաններում կանգնում է $\frac{1}{6}$ -ական ժամ, հինգերորդ դում $\frac{1}{4}$ ժամ, և իններորդում $\frac{1}{12}$ ժամ:

252. Մի վառարան վառելու համար ամսական գնում է $\frac{3}{5}$ խոր. և փալտ: Վորքան կնստի նման 10 հատ վառարան վառակը $\frac{1}{2}$ ամսում, յեթե 1 խոր. և փալտն արժե $9\frac{1}{5}$ ռուբլի:

253. Կոռպերատիվն ստացավ 2 հակ մանուֆակտուրա՝ ընդամենը $373\frac{3}{4}$ և վճարեց $595\frac{3}{4}$ ռուբլի: Մի հակում կար

192 $\frac{1}{2}$ մ, վորի մետրն արժեքը $1\frac{2}{5}$ ոռոբլիւ Յերկրորդ հակի մետրն լինչ արժեքը:

254. $22\frac{1}{2}$ մ յերկարություն և 15 մ լայնություն ունեցող շենքի հիմքը փորում են 2 մ խորությամբ: Դուրս թափված հողը գոխադրելու համար քանի սայլ ե պետք, յեթե լուրաքանչյուր սայլը կարող ե վերցնել $\frac{3}{5}$ ս, իսկ 1 խոր. դմ հողը կշռում ե $1\frac{3}{5}$ կգ:

255. Տան յերկարությունն է $16\frac{1}{2}$ մ, լայնությունը կազմում է յերկարության $\frac{2}{3}$ մասը, իսկ պատերի բարձրությունը կազմում է յերկարության $\frac{2}{11}$ մասը: Խնչքան կնստի այդ տան սվաղելը, յեթե 1 քառ. մ սվաղում են $\frac{9}{10}$ ոռոբլով, իսկ պատուհաններն ու դռներն ընդհանուր մակերեսից գուրս չի հանվում:

256. Ցորենն աղալիս կորցնում ե իր քաշի $\frac{1}{5}$ մասը: Վերաբան հաց կստացվի $1\frac{1}{2}$ ս ցորենից, յեթե ալյուրը թխելիս ավելանում է իր քաշի $\frac{2}{5}$ ով:

257. Խանութից գնեցինք $3\frac{1}{2}$ կգ խմորեղեն, կիլոգրամը $2\frac{1}{2}$ ոռոբլով, 15 կգ աղ $\frac{4}{25}$ ոռոբլով և մի քանի կիլոգրամ կրուպա, վորի $\frac{3}{5}$ կգ արժեքը 36 կրակել քանի կիլոգրամ կրուպա գնեցին, յեթե ընդամենը վճարել են $17\frac{3}{20}$ ոռոբլի:

258. Կարի արհեստանոցը գնեց 5390 ոռոբլու մահուդ, մետը $12\frac{1}{4}$ ոռոբլով: Այդ մահուդի $\frac{11}{20}$ մասից կարեցին կոստյումներ,

իսկ մնացած մասից պատրաստեցին 72 հատ միատեսակ վերաբերությունը թուրաքանչլուր վերաբերությի համար ի՞նչքան մահուրդ գնաց:

259. Արագընթաց գնացքը 142 կմ հեռավորությունն անցնում է 3 ժամում, իսկ աղբանքատար գնացքը 128 կմ-ը անցնում

է 6 ժամում: Ապրանքատար գնացքի դուրս դալուց $9\frac{3}{4}$ ժամ հետո նրա յետելից դուրս եկավ արագընթացը: Թանը ժամից հետո կհասնի աղբանքատար գնացքին:

260. Արագացրած գնացքը Մուկվա—Լենինգրադ հեռավորությունն անցնում է 12 ժամում, իսկ արագընթացը՝ 10 ժամում: Արագընթաց գնացքի դուրս դալուց $\frac{3}{4}$ ժամ հետո Մուկվայից դուրս եկավ նրա յետելից արագընթացը: Թանը ժամից հետո արագընթացը կհասնի արագացրած գնացքին:

261. Ավտոմոբիլն առաջին որն անցավ լերկու քաղաք-ների միջի հեռավորության $\frac{2}{7}$ մասը, լերկորդ որը՝ մնացածի $\frac{7}{18}$ մասը, իսկ յերրորդ որը՝ մնացած 90 կմ: Ի՞նչքան եր յերկու քաղաքների միջի հեռավորությունը:

262. Յերկու գնացքներ միաժամանակ դուրս եկան միմյանց հանդեպ, մեկը՝ ծուլալից—Պենզա, մյուսը՝ Պենզայից—ծուլա: Այդ քաղաքների հեռավորությունն է 586 կմ: Առաջին գնացքը մի ժամում անցնում է $28\frac{4}{5}$ կմ, իսկ լերկորդը՝ $32\frac{1}{2}$ կմ. 6 $\frac{3}{4}$ ժամից հետո նրանց միջի հեռավորությունն ի՞նչքան կլինի:

263. Խորհ. անտեսության հողամասի $\frac{4}{9}$ մասը բռնում է մարգագետինը, մնացածի $\frac{3}{7}$ մասը՝ վարելահողը, իսկ մնացածը՝ անտառը: Գտնել ամբողջ հողամասի և անտառի մակերեսները, յեթե մարգագետնի մակերեսը վարելահողի մակերեսից $216\frac{2}{3}$ հա-ովկավելի լեռ:

264. 220 ոռոբերով գնեցին յերկու տեսակ մահուրդ, առաջինի մետրն արժեն 6 $\frac{1}{4}$ ոռոբեր, իսկ լերկորդինը $\frac{3}{8}$ ոռոբերի: Առաջին

տեսակը 8 մ.-ով պակաս ե յերկրորդ տեսակից, Յուրաքանչյուր
տեսակից ի՞նչքան գնեցին:

265. Յեթե անհայտ թվի $\frac{3}{17}$ մասին ավելացնենք 150, ապա
կստանանք անհայտ թվի $\frac{2}{3}$ մասը: Գտնել անհայտ թիվը:

266. Յեթե անհայտ թվի $\frac{5}{12}$ մասից հանենք 99, ապա, կստա-
նանք նույն անհայտ թվի $\frac{3}{16}$ մասը: Գտնել անհայտ թիվը:

267. Տուրիստն անցնելով յերկու քաղաքների միջի հեռա-
վորության $\frac{5}{41}$ մասը, հաշվեց վոր նրան մնում ե անցնելու ան-
ցածից 93 կիլոմետր ավելի հեռավորություն: Գտնել այդ քաղաք-
ների միջի հեռավորությունը:

268. Զորամասը կազմված եր հետևակից, հեծելազորից և
հրետանուց: Հետեակը կազմում եր զորամասի $\frac{3}{5}$ մասը, հեծելա-
զորը կազմում եր հետեակի $\frac{5}{8}$ մասը, իսկ մասցածը՝ հրետանին:
Վորոշել զորամասում քանի՞ հոգի կային, յեթե հայտնի լե, վոր
հեծելազորի թիվը թնդանոթաձիգների թվից 4200 հոգով ավել-
իլ լե՞:

269. Դրամարկղից առաջին անգամ տվին ամբողջ զումա-
րի $\frac{3}{11}$ մասը, հետո մասցորդի $\frac{1}{4}$ մասը, ապա նոր մասցորդի $\frac{2}{7}$
մասը և վերջապես յերրորդ մասցորդի $\frac{7}{9}$ մասը, վորից հետո դրա-
մարկղում մասց 660 ռուբլի: Դրամարկղում ի՞նչքան գումար կար:

270. Յերկու թվերի տարրերությունն ե 40, յեթե առաջին
թվից հանենք նրա $\frac{4}{5}$ մասը, իսկ յերկրորդից՝ նրա $\frac{2}{3}$ մասը, ա-
պա կստանանք հավասար մասցորդներ: Վորաշել այդ թվերը:

271. Յերկու արկղում գտնվում են 390 հեղուկ (միխ):
Յուրաքանչյուր արկղում ի՞նչքան կա, յեթե առաջին արկղում

լեղած հեղուսների թիվը հավասար է լերկորդում լեղած հեղուսների թվի՝ $\frac{2}{3}$ մասին:

272. Յեթե զործարանի բանվորների թվին ավելացնենք այնքան, վորքան արդեն կան և ապա նրանց $\frac{2}{9}$ մասը, այդ գեղաքում կստանանք 3400 հոգի: Գործարանում քանի բանից լավագու կար:

273. Յերկու տրակտորներ վարում են հողը: Առաջինը վարում է լերկորդի վարած հողի $\frac{13}{15}$ մասը, Այդ տրակտորները քանի հեկտար վարեցին, յեթե լերկորդն առաջինից 34 հա-ուղավարեց:

274. Յերկու թվերի գումարը հավասար է 4512-ի: Մի գումարելին կազմում է մուսի $\frac{5}{11}$ մասը: Գտնել գումարելիները:

275. Յերկու թվերի գումարն է 51: Առաջին թվի $\frac{2}{3}$ մասը հավասար է լերկորդի $\frac{3}{4}$ մասին: Գտնել այդ թվերը:

276. Յերկու թվերի գումարը հավասար է 1-ի: Գտնել այդ թվերը, յեթե առաջինի $\frac{1}{2}$ -ը հավասար է լերկորդի $\frac{1}{3}$ -ին:

277. Յերկու թվերի տարբերությունը հավասար է 44-ի: Առաջին թվի հինգերորդ մասը հավասար է լերկորդի $\frac{3}{4}$ մասին: Վերընք են այդ թվերը:

278. Յերեք խորհանտեսություններ ունեն 3564 նա հող: Առաջինն ունի $\frac{1}{2}$ -ը և իրկրորդն ունի $\frac{1}{3}$ -ը այն մասի, վորքան ունի յիրորդը: Յուրաքանչյուր տնտեսություն քանի հեկտար հող ունի:

279. Յերկու կոլտնտեսություններ ունեն 270 ձի: Մի անտեսության ձիերի թիվը մլուսից $1\frac{1}{2}$ անգամ ավելի յեւ Յուրաքանչյուր անտեսություն քանի ձի ունի:

280. 18 մ լերկարություն ուներող տախտակը պետք եւ բառանել լերկու ալնալիսի մասերի, վոր մեկը մլուսից $3\frac{1}{2}$ անդամ ավելի լինի: Ի՞չքան պետք եւ լինի լուրաքանչյուր մասի լերկարությունը:

281. Յերեք պարկում կա 460 հատ խնձոր: Առաջին պարկում խնձորների թիվը հավասար եւ յերկորդ պարկի խնձորների թվի $\frac{3}{4}$ -ին, իսկ յերրորդ պարկում $1\frac{1}{2}$ անդամ ավելի լի, քան առաջինում: Յուրաքանչյուր պարկում ի՞նչքան չննձոր կա:

282. Յերկու թվերի գումարն եւ $1\frac{1}{2}$: Մի թիվը մյուսից $1\frac{1}{2}$ անդամ ավելի լի: Գտնել ալդ թվերը:

283. Այժմ վնր ժամն ե, յեթե որվա մնացած մասը անցած մասից $1\frac{2}{5}$ անդամ ավելի յի:

284. Այժմ վնր ժամն ե, յեթե որվա անցած մասը հավասար եւ մնացած մասի $\frac{1}{3}$ -ին:

285. Հստ ցուցակի խմբում կա 38 աշակերտ: Պիոներ կազմակերպության մեջ չընդգրկված աշակերտների թիվը կազմում է պիոներների թվի $\frac{3}{16}$ մասը: Խմբում քանի պիոներ կա:

286. Յերկու թվերի գումարը հավասար եւ 45-ի: Այդ թվերն իրար վրա բաժանելով ստանում ենք մի քանորդ, վոր հավասար եւ $2\frac{1}{3}$: Գտնել ալդ թվերը:

287. Բանվորը իր պատվերը կատարեց $10\frac{1}{2}$ որում: $3\frac{1}{2}$ որում ալդ պատվերի վճր մասը կկատարի:

288. Վաննան ունի յերկու ծորակ՝ տաք և պաղ: Տաք ծորակով վաննան լցվում է $12\frac{1}{2}$ բոպեկում, իսկ սառը ծորակով

10 բովելում: Մորակները $\frac{1}{2}$ բովել բաց թսղնելուց հետո փակեցին տաք ծորակը: Սառը ծորակով վմբքան ժամանակից հետո կլեցավի վաննան:

289. Տարբեր յերկրների դրամական միավորների արժեքներ համեմատական տախտակը ուսւըլիներով.

1 ֆունտ ստերլինգ	Ամերիկյան 1 դոլարը	Գերմանական 1 մորկը	Եվրոպական 1 կրոնը	Ֆրանսական 1 ֆրանկը	1 չեռվու- նեց
$\frac{6}{25} սուբլի$	$1\frac{24}{25} սուբլի$	$\frac{6}{13} սուբլի$	$\frac{7}{20} սուբլի$	$\frac{3}{40} սուբլի$	20 սուբլի

1) 910 գերմանական մարկը քանի՞ շվեդական կրոն և առում:

2) 90 գերմանական մարկ գնելու համար քանի՞ ֆրանսական ֆրանկ և պետք: 294 դոլմրի համար, 249 ֆունտ ստերլինգ:

3) 441 ֆրանկ գնելու համար քանի՞ դոլար պետք և: 588 մարկի հմմար, 686 կրոնի:

4) 2178 գերմանական մարկ գնելու համար քանի՞ ֆունտ ստերլինգ պետք և, 3320 ֆրանկի՞ համար:

VI. Տասնորդական կոտորակներ

Տասնորդական կոտորակների կարգավորությունը և գրեթե լր: 10, 100, 1000 անգամ մնջաց- նելը և փարաց- նելը:
--

1. Կարդալ հետեւալ տասնորդական կոտորակները՝ 0,9 3,8, 0,25, 45,09, 0,008, 1,003, 0,012, 1,123, 4,503, 120,02, 1432,002, 0,0034, 3,12481, 12,0001, 1,0101, 1,1001, 0,0064, 124,0008, 3,1215926, 0,000384, 0,001004, 200,10003, 0,000072, 1,100507:

2. Հետևյալ թվերը գրել տասնորդական կոտորակով՝

$$\begin{array}{cccccc} \frac{7}{10}, & \frac{3}{10000}, & \frac{42}{100000}, & \frac{2805}{100}, & \frac{5}{10000}, & 2\frac{3}{100}, \\ \frac{1}{100}, & \frac{27}{10}, & \frac{1209}{10}, & 1\frac{15}{100000}, & \frac{5}{1000}, & 28\frac{13}{10000} \\ \frac{138}{100}, & \frac{21}{1000000}, & \frac{24}{1000}, & 1\frac{37}{10000}, & \frac{1004}{1000}, & \\ & & & 10\frac{3}{1000}, & 10\frac{48}{100000}, & \end{array}$$

3. Մեծացնել հետևյալ թվերը՝

- 1) 4,56, 0,368, 1,1, 25,7, 85,736 թվերը 10 անգամ:
- 2) 7,14, 106, 12,3958, 456,1 29,7, 34,1569-ը 100 անգամ:
- 3) 0,365, 4,29, 10,3845, 325,1 14,05-ը 1000 անգամ:

4. Փոքրացնել հետևյալ թվերը՝

- 1) 8,9, 4,73, 7, 15,6, 347,24, 125,6, 9,56, 10 անգամ:
- 2) 8, 6, 35,4, 10,38,5,638, 104, 456,2, 1374,37, 100 անգամ:
- 3) 459,6, 37,28, 100,01, 1,56, 7,24, 0,365, 0,029, 0,04, 25, 456, 138, 215,1, 1468,3, 24, 7, 0,1 100 անգամ:

5. 0,32, 0,14, 0,098, կոտորակներն արտահայտել հազարերորդական մասերով և ցույց տալ, թե նրանցից վերն ե ամենամեծը և վերը՝ ամենափոքրը:

6. Կարդալ հետևյալ կոտորակները՝ 0,00043, 0,0043, 0,043, 0,43, 4,3: Այս կոտորակներից ինչ կարող ենք ասել:

7. Կարդալ կոտորակները՝ 0,07, 0,070, 0,0700, 0,07000: Այս կոտորակների նկատմամբ ինչ կարող ենք ասել:

8. Հետևյալ կոտորակները դասավորել մեծության կարգով և կսահմանելով՝ 0,25, 0,387, 0,362, 0,25998, 0,00489, 0,81, 0,7, 0,216958, 0,7208, 0,8056:

9. 13 տարեկան տղայի հասակը միջին թվով 1,481 մ է: Դանի՞ դիցհմետը ե ալդ, քանի՞ սանտիմետր, քանի՞ միլիմետր:

10. 15 տարիեկան տղայի հասակն և 1508 մմ. Այդ քանիք
սանտիմետր է, քանի՞ դիցիմետր և քանի՞ մետր:

11. Կատարել բազմապատկում՝

1) $33,491 \times 10,$	2) $0,008 \times 10,$
$33,491 \times 100,$	$0,008 \times 100,$
$33,491 \times 1000,$	$0,008 \times 1000,$
$33,491 \times 10000,$	$0,008 \times 10000,$

12. Գրել այն թվերը, վորոնք 10000 անգամ փոքր են հետեւյալ թվերից՝ 2185, 435, 92, 6, 1275, 8 15486, 79, 0,8, 78, 21, 1,0104 0,149:

13. 1) $0,735 \cdot 73,5 \cdot 1\text{ց}$ քանի՞ անգամ փոքր է:

2) $62,81 \cdot 0,006281 \cdot 1\text{ց}$ քանի՞ անգամ մեծ է:

14. Կատարել բաժանում՝

1) $74, 89: 10,$	2) $8, 19: 10,$
$37, 5: 100,$	$3,164: 100,$
$62, 78: 1000,$	$8, 24: 000,$
$36,409: 10000,$	$6, 3: 10000,$

15. Արտահայտել մետրով՝ ա) 36 սմ, 38 դմ, 25,9 տմ, 81մ,
27,84 մմ, բ) 5 կմ, 6 մմ, 17 կմ, 8,35 կմ, 242,9 սմ.

16. Վերածել կիլոգրամի՝ 19 դգ, 847 գր, 27,4 գր, 0,8 գր:

17. Վերածել տոննի՝ ա) 863,2 կգ, բ) 3,687 կգ, դ) 0,09 կգ,
դ) 9 կգ:

18. Արտահայտել հեկտարով՝ ա) 90 և 75 քառ. մ, բ) 347 և
80 քառ. մ, դ) 456,81 ա:

19. Արտահայտել քառակուսի մետրով՝ ա) 5,27 հա, բ) 89,2 ա,
դ) 45,2 հառ. կմ, դ) 0,56 հա:

20. Արտահայտել չերվոնեցով՝ 235 և — 60 կոպ., 3947 և —
52 կոպ.:

21. Վերածել սուրլու և կոպեկի՝ 46,875 չերվոնեցը, 13,84
չերվոնեցը:

22. 43 կմ-ը քանի՞ սանտիմետր ունի:

23. 47 մ-ը քանի՞ կիլոմետր է:

24. 6 կմ 75 մ-ը քանի՞ մետր եւ
 25. 44 ս քանի՞ կիլոդրամ ունի:
 26. 23,5 դր արտահայտել դրամով:
 27. 436 սգր-ը վերածել միլիգրամի:
 28. 9,08 կգ-ը արտահայտել դրամով:
 29. 57 կմ-ը քանի՞ մ եւ
 30. 28,5 դմ արտահայտել սանտիմետրով:
 31. 90 հա քանի՞ քառ. մ եւ
 32. 6,07 քառ. դմ-ն արտահայտել քառակուսի սանտի-
 մետրով:

33. 314 մ-ի մեջ քանի՞ քառակուսի սանտիմետր կա:
 34. 98,4 հա վերածել քառակուսի մետրի:
 35. 4,715 հա մակերեսի մեջ քանի՞ քառակուսի մետր կա:
 36. 43 խոր. մ-ի մեջ քանի՞ խորանարդ դեցիմետր կա:
 37. 53 խոր. մ-ի մեջ քանի՞ խորանարդ սանտիմետր կա:
 38. 3,087 խոր. դմ-ն արտահայտել խորանարդ սանտի-
 մետրով:

39. 5632 սմ քանի՞ մետր եւ
 40. 286300 սմ յերկարությունը վերածել կիլոմետրի և
 մետրի:
 41. 9581 սմ. յերկարությունը վերածել մետրի և դեցի-
 մետրի:

42. 516 մմ յերկարությունը դրել դեցիմետրով և սանտի-
 մետրով:

43. 3862 գր-ի մեջ քանի՞ կիլոգրամ կա:
 44. կիլոգրամով և դրամով արտահայտել 51826 գր:
 45. 35262 կգ ծանրությունն արտահայտել տոննով և կի-
 լոգրամով:

46. 4,5 հի վերածել լիտրի:
 47. 9862 մ արտահայտել կիլոմետրով և հեկտոմետրով:
 48. 7500 քառ. մ քանի՞ ար ունի:
 49. 48,4 հա վերածել արի:
 50. 150704 քառ. մետր մակերեսն արտահայտել հեկտո-
 բով և արով:
 51. 7856392 խոր. սմ ծավալն արտահայտել խորանարդ
 մետրով և խորանարդ դեցիմետրով:

52. 5,028 խոր. և հեղուկի ծավալն արտահայտել լիտրով:

53. Ի՞նչու տասնորդական կոտորակը 10, 100, 1000 անգամ մեծացնելիս նրա մոտ չի կարելի դրել 1, 2, 3 զերոներ: Այդ դեպքում կոտորակն ի՞նչ կլինի:

54. Մի հայտարարի բերել այս կոտորակները. 0,739, 0,5, 8,214, 0,008106.

55. Կրճատել այս կոտորակները՝ 0,580, 3,200, 4,9000, 71,8040, 0,00600:

Յանաբական
կառավագեների
գումարումբ:

56. Գտնել հետևյալ գումարները՝

1) $100+1+0,1+0,01+0,001+0,0001$,

2) $3+0,01+0,0004$,

3) $0,3+0,008+0,00003$,

4) $40+0,6+0,0006$.

57. $4,81+0,607$,

58. $0, 1+0,239+0,17$,

$8,17+3,564$,

$2,57+2,4+7,314$,

$11,54+0,368$,

$15,27+0,033+6,5$,

$12,71+9,85$,

$7,+0,02+6,7998$,

59. Հետևյալ գումարն արտահայտել մետրով՝ 34 դմ+23,9 սմ:

60. Հետևյալ գումարն արտահայտել սանտիմետրով՝ 29 մ+
+57,29 սմ+47 մմ:

61. Հետևյալ գումարն արտահայտել միլիմետրով՝ 3,565 մ+
+4,2 սմ+0,3 կմ:

62. Հետևյալ գումարն արտահայտել գրամով՝ 0,04 կգ+
+39 գր:

63. Հետևյալ գումարը վերածել կիլոգրամի 18 կգ+347 գր+
+21 գր+4,8 կգ:

64. Հետևյալ գումարն արտահայտել տոննով՝ 562,1 կգ+
+0,09 կգ+2 կգ+832 գր:

65. Հետևյալ գումարն արտահայտել արով՝ 81,75 ֆառ. մ+
+327,8 ֆառ. մ+326,6 ա:

66. Հետևյալ գումարն արտահայտել քառակուսի մետրով՝
3,27 հա+87,2 տ+45,2 ֆառ. կմ:

67. Հետևյալ գումարն արտահայտել խորանարդ գեցիմետրով՝ 5,7 խոր. մ+0,04 խոր. մ+41 խոր. սմ:

68. Հետևյալ գումարն արտահայտել լիտրով, 0,23 նլ+
+3,7 նլ+72,54 նլ:

69. Գտնել հետևյալ գումարները՝

- | | |
|-------------------------------|----------------------------------|
| 1) $1.23 + 4,56$ | 2) $2,31 + 3,16 + 4,52$ |
| 3) $0,37 + 7,402 + 0,005$ | 4) $6,27 + 4,45 + 9,$ |
| 5) $4,348 + 1,452 + 0,1,$ | 6) $3,43 + 2,014 + 1,256,$ |
| 7) $0,6335 + 0,246 + 2,3425,$ | 8) $0,26 + 0,4 + 0,348 + 0,992,$ |

70. Գտնել հետևյալ գումարները՝

- | |
|--|
| 1) $19,407 + 8,09 + 2,103 + 3,6,$ |
| 2) $53,404 + 1,4342 + 0,05 + 5,5428,$ |
| 3) $19,101 + 1,0035 + 1,79 + 0,12 + 5,1055,$ |
| 4) $0,129 + 0,00497 + 0,85703 + 1,009,$ |

71. Գտնել հետևյալ գումարները՝

- | |
|--|
| 1) $0,2093 + 27,0605 + 4,00802 + 6,90047 + 1,82171,$ |
| 2) $7,02006 + 2,80004 + 0,2901 + 1,00532 + 3,58448,$ |
| 3) $0,08496 + 0,10023 + 0,00007 + 0,20904 + 0,6057,$ |

72. Հետևյալ գումարն արտահայտել կիլոդրամով՝ 0,057 Տ+
+0,43 կգ+359,2 գր+0,003 Տ:

73. Հետևյալ գումարն արտահայտել միլիմետրով՝ 4,8 մմ+
+317,2 մմ+4,8 մ:

74. Հետևյալ գումարն արտահայտել կոպեկով՝ 6,4 չեր-
վոնեց+0,83 չերվոնեց+4,5 ռուբ.+16 կոպ.:

75. 250 թվին ավելացնել նրա հարյուրերորդ մասը. ստաց-
ված գումարը փոքրացնել 1000 անգամ և ապա ավելացնել 1,6465:

76. 3,14159 թվին գումարել նրա տասներորդ և հարյուրերորդ
մասերը և ստացված գումարը մեծացնել 0,5128351-ով:

77. 8երկու թվերի գումարը հավասար է $(0,593 + 1,507),$
թվերից մեկը մլուսից 9 անգամ մեծ է: Գտնել փոքր թիվը:

78. 8երկու թվերի գումարը հավասար է $(3,5 + 0,39 + 0,31),$
թվերից մեկը մլուսից 99 անգամ մեծ է: Գտնել փոքր թիվը:

79. Աշակերտը գումարն ստուգելիս ջնջեց 256,74 գումա-
րելին և մնացածները գումարելով ստացավ 7567,396: Գտնել ամ-
բողջ գումարը:

80. 17,6 ին ավելացնել 283-ի տասերորդ և 6,5-ի հարկությունը մասերի գումարը, ապա ստացված նոր գումարը մեծացնել 100 անգամ

81. Վճրքան պետք ե լինի լերկաթե ձողի յերկարությունը, վորպեսզի նրանից կտրենք 4 կտոր, վորոնց լերկարություններն են՝ 19,75 դմ, 17,5 դմ, 12,54 դմ և 18,4 դմ:

82. Մի գետի մեջ, վորի խորությունն ե 12,2 մ, խվել են ցցեր, վորոնք հողի մեջ մտել են 2,26 մ, իսկ ջրից բարձրացել 1,5 մ: Խոչքան ե ցցերի լերկարությունը:

83. Տուրիստը վատքով անցավ 94,08 կմ, լերկաթուղով՝ 895,6 կմ և շողենավով 235,38 կմ: Վճրքան ճանապարհ կտրեց:

84. Կոռպերատիվում կա 3 կտոր մահուդի Առաջին կտորը՝ 116,25 մ ե, յերկրորդը՝ առաջինից 17,25 մ-ով ավելի, իսկ յերրորդը՝ յերկրորդից 0,5 մ-ով ավելի: Թանիք մետր մահուդ կար կոռպերատիվում:

85. Վալը ընկնող մարմինն առաջին վայրկանն անցնում է 4,9 մ, իսկ լուրաքանչյուր հաջորդ վայրկյան նախորդից 9,8 մ-ով ավելի: Մարմինը Յ վայրկյանում քանիք մետր կանցնի:

86. Գտնել քառանկյան պարագիծը, յիթե մի կողմը հավասար է 16,4 մ, յերկրորդը՝ նրանից 2,01 մ-ով ավելի լի, յերրորդը՝ յերկրորդից 0,73 մ-ով ավելի, իսկ չորրորդը՝ յերրորդից 1,54 մ-ով ավելի:

87. Ցեռանկյան կողմերի յերկարություններն են՝ 10,6 մ, 7,23 մ, և 11,5 մ: Գտնել պարագիծը: Խոչքանով կմեծանալ յեռանկյան պարագիծը՝ յիթե յուրաքանչյուր կողմը մեծացնենք 0,7 մ-ով, յիթե լուրաքանչյուր կողմը մեծացնենք 0,6 մ-ով:

88. Գտնել հետեւալ տարբերությունները:

Ցանուրգական կառագակեների համար մ?

- | | |
|---------------|-----------------|
| 1) 6,8—3,5, | 5) 0,549—0,384, |
| 2) 0,59—0,27, | 6) 0,7—0,49, |
| 3) 0,92—0,4, | 7) 3,87—2,945, |
| 4) 0,375—0,2 | 8) 2,15—1,579, |

- | | |
|-----------------|--------------|
| 9) 0,8—0,125, | 11) 3—0,93, |
| 10) 19,8—0,918, | 12) 5—2,556, |

89. Գառնել հետեւյալ տարբերություններն և ստուգել արագությունը:

- | | |
|---------------------|------------------------|
| 1) $15,32 - 4,14$, | 5) $125 - 124,93$ |
| 2) $34,5 - 16,32$, | 6) $19,435 - 19,039$, |
| 3) $45 - 10,15$, | 7) $7,25 - 6,893$, |
| 4) $0,2 - 0,193$, | 8) $1 - 0,534$, |

90. Կառնել հետեւյալ տարբերությունները:

- | | | |
|----------------------|---------------------|---------------------|
| 1) $9,391 - 4,536$, | 4) $4,6 - 4,295$, | 7) $19 - 18,62$, |
| 2) $9,234 - 5,679$, | 5) $5,32 - 4,885$, | 8) $100 - 94,125$, |
| 3) $8,5 - 1,34$, | 6) $2 - 0,7$, | |

91. Կառնել հետեւյալ տարբերությունները՝

- 1) $11 - (5 - 0,45)$,
- 2) $(18 - 9,46) - 7,65$,
- 3) $(6,1 - 2,34) - 2,67$,
- 4) $(34 - 19,05) - (13 - 7,065)$,
- 5) $(1 - 0,156) - (0,72 - 0,376)$,
- 6) $(7,563 - 5,409) - (11 - 9,246)$,
- 7) $(8,731 - 0,78) - (8,8 - 3,057)$,

92. Կատարել հետեւյալ գործողությունները՝

- 1) $6,2 + 0,43 - (5,14 + 0,09)$,
- 2) $13,8 + 9,1 - (5,9 - 3,8)$,
- 3) $8,4 - 3,8 - (5,1 - 4,8)$,
- 4) $43 - 19,05 - (13 - 7,06)$,
- 5) $1 - 0,156 - (0,72 - 0,376)$,
- 6) $49,8 + 13,1 + 6 - (17,1 + 2,56)$,
- 7) $4,4 + 7 + 11,32 - (8,42 - 5,7)$,
- 8) $5,03 + 1,99 + (4,1 - 2,7) - (5,83 - 4,97)$,
- 9) $2,8 + 3 + 5,2 + (4,7 - 18) - (9,6 - 3,85)$,
- 10) $5,92 - 4,8 - (34,2 - 34,16) + (2,7 + 1 + 0,05)$,
- 11) $12 - (0,2 + 3,28 + 6,78 - 1,2) + (3,9 - 2,7)$,
- 12) $12 + (14,2 - 6,28) + (3,33 - 2,23) - (4 - 2,6)$,

13) Հետևյալ գործողության արդյունքն արտահայտել կո-
մեկով՝

$$8,4 \cdot չերվոնեց + 0,83 \cdot չերվոնեց - 4,5 \cdot ռուբլի - 18 \cdot կոպեկի:$$

93. Կատարել հետևյալ գործողությունները՝

$$1) 20 - 5 + 0,0007 - 0,8 + 0,195,$$

$$2) 20 - (5 + 0,0007 - 0,8 + 0,195)$$

$$3) 30 - (5 + 0,0007) - (0,8 + 0,195)$$

$$4) 30 - (5 + 0,0007 - 0,8) + 0,195:$$

94. Կատարել հետևյալ գործողությունները՝

$$1) (13,1 - 9,25) - (4,9 - 3,15),$$

$$2) (1,1 + 9,73 - 3,635) + (2,8 - 1,495),$$

$$3) (10 - 3,745) - (0,9 + 0,855),$$

$$4) (1 - 0,456) + (3,5 - 1,144) - (1,137 - 0,883):$$

95. Կատարել հետևյալ գործողությունները՝

$$1) 54,03 - [13,321 - (17,481 - 14,19)],$$

$$2) (100,1 - 59,37) - (14,27 - 4,93 - 6,75),$$

$$3) [4 - 0,786] + (6 - 2,214)] - [3,93 + 2,703 - (1 - 0,567)],$$

96. Կատարել հետևյալ գործողությունները՝

$$1) [(16,18 - 7,243) + (30 - 21,4)] - (0,017 - 0,00117 - 0,00086),$$

$$2) [(6,007 - 2,89) + (2,61 - 0,964)] - 4,603 - (0,15 - 0,084),$$

$$3) 5,002 + 1,0004 - 3,0484 - [(5,7 - 4,8141) - 0,0059],$$

$$4) 9,0007 - (0,519 + 1,8743) - [(0,15 + 1,763) - (3,63 - 2,164)]:$$

97. Գտնել,թե հետևյալ որինակների մեջ չ-ը ի՞նչի յէ հա-
զասար՝

$$1) x + 0,25 = 4,3, \quad 6) 8,2 - x = 5,45,$$

$$2) 10,5 + x = 18, \quad 7) 20 - x = 12,3,$$

$$3) 4,75 + x + 5,02 = 24,1, \quad 8) x - (4,6 - 0,9) = 10,$$

$$4) x - 0,39 = 4,31, \quad 9) (18 - 3,6) + x = 15,4,$$

$$5) x - 12,905 = 7,095, \quad 10) (33,3 + 66,6) - x = 90,$$

98. Ի՞նչ թիվ պետք է ավելացնել 2,5-ին, վորպեսզի ստաց-

վի 25:

99. Վար թվին պետք է ավելացնել 9,8 վորպեսզի ստացած՝ 20:
100. Վար թվից պետք է հանել 5,5, վորպեսզի ստացվի 5:
Վար թիվը 11,38-ից 1,99-ով փոքր է:
101. Գումարելիներից մեկն է 50,98, գումարն է՝ 120,44:
Գանել մյուս գումարելին:
102. Ցերեք թվերի գումարն է 98,7: Գումարելիներից մեկն
է 12,5, մյուսը՝ 7,89, Ի՞նչքան և լերկորդ գումարելին:
103. Նվազելին հավասար է 61,9-ի, տարբերությունը 25,37-ի:
Գանել հանելին:
104. Ի՞նչպես կփոխվի գումարը, յեթե գումարելիներից
մեկը փոքրացնենք 7,5-ով, իսկ մյուսը՝ 5,4: Ստուգել վորեւ որին
նակով:
105. Ի՞նչպես կփոխվի գումարը, յեթե գումարելիներից
մեկը մեծացնենք 8,6-ով, իսկ մյուսը փոքրացնենք 12,3-ով:
Ստուգել որինակով:
106. Ի՞նչպես կփոխվի տարբերությունը՝
- 1) Յեթե նվազելին մեծացնենք 92,7-ով. փոքրացնենք
34,5-ով:
- 2) Յեթե հանելին մեծացնենք 32,11. փոքրացնենք 23,5-ով:
- 3) Յեթե նվազելին և հանելին փոքրացնենք 0,4-ով. մեծացնենք 0,7-ով:
- 4) Յեթե նվազելին մեծացնենք, իսկ հանելին փոքրացնենք 0,1-ով:
- 5) Յեթե նվազելին փոքրացնենք, իսկ հանելին մեծացնենք 1,75-ով:
107. 3,2—1,936 տարբերությունը փոքրացնել 100 անգամ:
108. 5,3-ի հարցուրերորդական մասից հանել 0,002-ի տասա-նապատիկը և տարբերությանն ավելացնել 7,1: Վարքան կլինի:
109. Գտնել մի այսպիսի թիվ, վոր 100 անգամ մեծացնելով և արտադրյալին 3,2 ավելացնելով, 256,7 լինի:
110. Ի՞նչ կլինի տարբերությունը, յեթե նվազելին ավելացնենք, իսկ հանելին՝ փոքրացնենք 0,12-ով:
111. Ի՞նչ կլինի տարբերությունը, յեթե նվազելին ավելացնենք 3,5-ով և հանելին՝ 0,7:

112. Գտնել այն թիվը, վոր 2,5-ից այնքանով և մեծ վորքանով 5,7-ը մեծ և 2,39-ից:

113. Ցերկու թվերի տարբերությունը հավասար է 0,756: Ազրքան կլինի տարբերությունը, չեթե նվազելին մեծացնենք 5,3-ով, իսկ հանելին փոքրացնենք 0,9-ով:

114. Գտնել այն թիվը, վոր 9,07-ից այնքանով և փոքր, վորքանով 99,78-ը փոքր և 100,1-ից:

115. Մի գաշտի լերկարությունն է 1986,5 մ, իսկ մյուսինը՝ 2173,4 մ: Առաջին գաշտը լերկորդից բնչքանով փոքր է:

116. Մեխովլ լի արկղի վրա գրված ե՞ բրուտոս քաշն և 49,183 կգ, տարան՝ 1,796 կգ, Վորոշել նետոս քաշը:

117. Մի գնացք հասավ մյուսին: Առաջին գնացքը մի ժամում անցավ 34,76 կմ, իսկ մյուսը՝ 29,97 կմ: Մի ժամ առաջ գնացքները միմյանցից բնչ հեռավորության վրա եղին գտնվում:

118. Դեղին պղինձ (արուլը) պատրաստելու համար հալեցին 64,85 կգ կարմիր պղինձ, 32,75 կգ ցինկ և 2,1 կգ կապար: Հալելու ժամանակ պակասեց 2215 քր մետաղ: Վորոշել ստացված արուլը քաշը:

119. 9,35 մ լերկարություն ունեցող պարանից հաջորդաբար կարեցին՝ 2,35 մ, 3,7 մ և 1 մ: Վարքան եր մնացած պարանից լերկարությունը, (Լուծել լերկու լեղանակով):

120. 7,35 մ լերկարություն ունեցող ռելսը կտրեցին լերկու մասի: Մի մասի լերկարությունն է 2,89 մ: Ցերկորդ կտորն առաջինից բնչքանով լերկար եր:

121. 8,14 մ լերկարություն ունեցող ռելսը կտրեցին լերկու մասի, վորոնցից մեկը մյուսից 0,99 մ-ով լերկար եր: Վորոշել յուրաքանչյուր մասի լերկարությունը:

122. Ապրանքով լիքը արկղը կշռում է 267,4 կգ: Նրանից առաջին անգամ ծախեցին 35,9 կգ, հետո 10,8 կգ և ապա 54 կգ, վորից հետո արկղում մնաց 161,9 կգ ապրանք: Հաշվել դատարկ արկղի ծանրությունը:

123. Ցերեք անգամ տարեկան ծեծեցին: Առաջին անգամ՝ 98,6 կգ, լերկորդ անգամ՝ 160,4 կգ, յերրորդ անգամ՝ 132,7 կգ: Աղալուց հետո ստացվեց 285,5 կգ ալյուր և 104,9 կգ տականք: Քաշից բնչքան պակսեց:

124. Վորոշել հինգ հենամեջ (բացվածք), ունեցող լերկա-

Թուղարին կամրջի ընդհանուր լեռկարությունը, յիթև միջի լեռեք հենամեջերի լեռկարությունն և 74,6-ական մետր, իսկ յերկու ծայրերի հենամեջերը 10,6-ական մետրով կարճ են:

125. Հացի փուռն առաջին որը գործածեց 4,25 և ալյուր, լեռկորդ որը առաջինից 1,75 տոննով պակաս, իսկ յերրորդ որը նախորդ լեռկու որերից 2,39 և պակաս: Յերեք որվա ընթացքում ինչքան ալյուր գործածեց:

126. 61,1 մ լեռկարություն ունեցող լարը բաժանել են 4 մասի: Առաջինի լեռկարությունն և 29,47 մ, յերկորդը՝ 10 անգամ և լեռրորդը՝ 8,63 մ-ով կարճ են առաջինից: Գտնել չորրորդ մասի լեռկարությունը:

127. Աշակերտը գիրք և թուղթ գնելու համար ծախսեց 0,9 ռուբլի: Գրքին 9 անգամ ավելի վճարեց, քան թղթին, ի՞նչ արժելին գիրքն ու տետրակը:

Կատարել հետեւյալ գործողությունները՝

Թանօրդական կոռորակների բազմազանումը
--

- | | |
|-------------------|-------------|
| 128. 1) 12,35.10, | 5) 0,25.2, |
| 2) 0,07324.100, | 6) 4,5.5, |
| 3) 0,03784.1000, | 7) 0,43.35, |
| 4) 0,648.10000, | 8) 1,35.48, |

9) 1,15.60, 11) 0,0354.25, 13) 0,4357.5000,

10) 2,34.48, 12) 1,03.200, 14) 0,0024.1225,

129. 1) 3.4.2 6) 7.0.18, 11) 14.0.365,

2) 5.25.4, 7) 15.2.34, 12) 21.0.304,

3) 14.17.35, 8) 600.7.1324, 13) 46.1.05,

4) 25.0.324, 9) 16.0.25, 14) 54.2.007,

5) 400.5.187, 10) 200.0.14, 15) 49.3.008:

130. 1) 5.2.1.2, 5) 1,01.2.04, 9) 16.15.0.08,

2) 1.2.1.4, 6) 15.2.0.003, 10) 0,0105.2.04,

3) 1.6.0.25, 7) 0,07.15.25, 11) 17.007.4.03,

4) 7.5.0.014, 8) 0,156.1.7 12) 0,0149.5.08:

131. 1) 0,017.2,5.0,8, 6) 8.0,604.125,
 2) 1,2.0,25.1,4, 7) 6.07.0,305.8,4,
 3) 1,125.7,6.0,01, 8) 3,75.18.0,06.1 5,
 4) 125 4.0,015.4,8, 9) 4,08.23.2.09.2 1,
 5) 0,4.0,5.0,25 10) 0,09.3,07.12,85.0,105:

132. 1) 0,05.100.044+0,25.12 4,
 2) 3,14.1,05+0,05.34,06,
 3) (3,6.0,4+2,24.2,5).0,1,
 4) (1—0,2).(3—2,68)+1,2.0,12,
 5) 1,28.1,25—0,95.0,64.

133. 1) (4,8475 + 4,5275).(4,8475 — 4,5275),
 2) (3,1—1,85).(1,2—1,12)+(10—1,4).(12,1—10,6),
 3) (235,4—190,7).(2,1—1,6)+3,264. 16 13 5),
 4) (1,5+0,95+0,001).(14,3+0,73+6,97)+(17—15,4).

134. Հետևյալ բաղմապատկումները կատարել բանվոր՝

0,5.10	0,396.100,	10.0,125,	2.0,01	0,01.0,1,
1,4.10	0,7.100,	10.22,4,	2.0,001	0,001.0,1,
0,75.10	0,6.20,	100.0,25,	2.0,0001	0,5.0,1,
0,4.2	0,8.50,	100.0,547,	7.0,3	0,05.0,1,
0,5.13	0,4.80,	100.1,19,	8.0,5	0,005.0,5
0,25.5	10.0,8,	1000.0,365,	12.0,4	1,4.0,5,
0,17.100	10.4,25,	2.0,1	0,1.0,1	0,25.1,6,

135. Գտնել՝

- 1) 14,2-ի 0,056 մասը 4) 195-ի 0,8 մասը, 7) 17,34-ի 0,98 մասը
 2) 1,15-ի 0,31 » 5) 213,64 ի 0,175 » 8) 43-ի 0,75 »
 3) 25,407 ի 0,69 » 6) 0,4-ի 0,33 » 9) 30,06-ի 0,72 »

136. Գտնել, թե x -ը ի՞նչի ի՞ն հավասար:

- 1) $x:0,3=24,5$ 5) $x:0,5=0,009$, 9) $6,8:x=4$
 2) $x:2=49,58$, 6) $x:0,01=35,28$, 10) $22,56:x=1,58$,
 3) $x:1,3=0,027$, 7) $x:1,8=2,12$, 11) $36,45:x=8,1$,
 4) $x:200=0,403$, 8) $6:x=1,5$ 12) $18,09:x=0,67$,

137. Ի՞նչ կլինի արտադրյալը, յեթե բազմապատկիչներից մեկը բաղմապատկինք 2,5-ով, իսկ մըուսը, 6,4-ով: Յեթե բաղմապատկիչներից մեկը մեծացնենք 1,2 անգամ, իսկ մըուսը, 2,5 անգամ:

138. Դանել այն թիվը, վոր յեթե բաժանելու վիճենք 3,456-ի վրա, քանորդը 7,89 լինի:

139. Վեր թվին պետք է ավելացնել 27,31, ստանալու համար 18,4-ից 3,5 անգամ մեծ թիվ:

140. Վեր թվի մեջ 5,13-ը պարունակվում է 2,4 անգամ:

141. 9,64-ը մեծացնել 3,5 անգամ:

142. Վեր թիվը 9,7-ից 8,3 անգամ մեծ է:

143. Ապրանքի նետոռ քաշն և 37,45 տոննու Տարան կազմում և ամբողջ քաշի 0,3 մասը: Վորոշել բըռուտոռ քաշը:

144. Առաջին տեսակի մահուդի մետրն արժենք 13,6 ռուբլի, իսկ յերկրորդինը՝ 2,8 ռուբլով եֆան և: Ի՞նչքան պետք է վճարել առաջին տեսակի 9,75 և յերկրորդ տեսակի 10,25 մ համար:

145. Դնել են 10,8 կգ ապրանք՝ կիլոգրամը 4,55 ռուբլով 11,4 կգ 3,15 ռուբլու և 7,6 կգ 1, 5 ռուբլով: Ամբողջ ապրանքին ի՞նչքան են վճարել:

146. Շոգեղարժը կշռում է 53,28 Տ, աենդերը՝ 32,47 Տ, իսկ լուրաքանչյուր բեռնված վազոն կշռում է 22,45 Տ: Վորոշել ամբողջ գնացքի քաշը, յեթե գնացքը բաղկացած է 29 բեռնված վազոնից:

147. 8,76 մ յերկարություն ունեցող ռելսից կտրեցին մի կտոր, վոր կազմում և ամբողջ յերկարության 0,45 մասը: Վորոշել կտրված և մնացած մասերի ծանրությունը, յեթե ամբողջ մետրը կշռում է 30,2 կգ:

148. Ունելին 67,5 ռուբլի, վորի 0,12 մասը ծախսեցին գրքերի համար, 0,16 մասը՝ թղթի համար, և 0,1 մասը՝ մատիտների համար: Ի՞նչքան փող մնաց:

149. Ավազանն ունի յերկու խողովակ: Առաջին խողովակից մի ըսպելում հոսում է 2,35 վեդրո, յերկրորդից՝ առաջինի 0,4 մասը, իսկ յերկու խողովակներ ավազանը լցնում են 8 ժամ 20 ըսպելում: Թանիք վեդրո յեր ավազանի տարողությունը:

150. A և B կալարաններից իրար հանդեպ դուրս յեկան

յերկու գնացքներ, առաջինի արագությունը 1 ժամում հավասար է 35,4 կմ, իսկ յերկրորդինը՝ 32,6 կմ, 0,9 ժամից հետո իրար հանդիպեցին, վորոշել կալարանների միջի հեռավորությունը:

151. Ուղղանկյունաձև սենյակի յերկարությունն է 5,75 մ, իսկ լայնությունը 5 մ, ի՞նչքան և սենյակի մակերեսը:

152. Քառակուսու կողմը հավասար է 29,17 մ, Գտնել նրա պարագիծը:

153. Քառակուսու կողմը հավասար է 0,59 մ, Գտնել նրա մակերեսը:

154. Ուղղանկյան հիմքն է 9,4 սմ, բարձրությունը կազմում է հիմքի 0,7 մասը: Գտնել ուղղանկյան մակերեսը:

155. Հաշվել ուղղանկյունաձև հողամասի մակերեսը՝ (արով), յեթե նրա յերկարությունն է 1,72 կմ, լայնությունը՝ 0,34 կմ:

156. Վորոշել ուղղանկյունաձև բանջարանոցի մակերեսը, յեթե նրա լայնությունն է 13,4 մ, իսկ յերկարությունը՝ նրանից և անգամ մեծ եւ:

157. Հաշվել ուղղանկյունաձև հողամասի մակերեսը (արով), յեթե նրա յերկարությունն է 516 մ, իսկ լայնությունը՝ 270 մ:

158. Դպրոցի հողամասը, վորի յերկարությունն է 170 մ, լայնությունը՝ 32,5 մ, պետք եւ ցանկապատել. քանի հատ ցից և պետք, յեթե լուրացանչուր մետրի համար անհրաժեշտ է 4 ցից:

159. Բնակարանն ունի 3 սենյակ, Առաջին սենյակի չափերն են՝ 5,6 մ \times 4,7 մ, յերկրորդի չափերն են՝ 3,8 մ \times 4,2 մ, յերրորդի չափերն են՝ 5,2 մ \times 4,5 մ: Ամսական ի՞նչքան ընակարանավարձ պետք է զճարել, յեթե 1 քառ. մ համար 44 կոպ. պիտի տալի (Վճռել յերկու յեղանակով):

160. Գտնել շրջանագծի յերկարությունը, յեթե շառավիղը հավասար է 7,6 մ, իսկ շրջանագծի յերկարությունը տրամադրից 3,14 անգամ մեծ եւ:

161. Անվի տրամագիծն է 0,8 մ, Նրա շրջանակի համար ի՞նչպիսի յերկարությամբ յերկաթաշերտ պետք է, յեթե յեռացնելու համար պետք է թողնել 10 տմ:

162. Հեծանվի անկին ունի 0,63 մ տրամագիծ: Գտնի կիրամետր կանցնի, յեթե 4500 պտուլտ կատարի:

163. Հաշվել շրջանի մակերեսը, յեթե շառավիղը հավասար

և 13,4 ոմ: Շրջանի մակերեսը հայտասար և շրջանագծի կեսը
բաղմապատկած շառավղով:

164. Խ՞նչի լեհավասար այն շրջանի մակերեսը, վորի տրամադրիծն է 6,3 սմ:

165. Խորանարդի կողմը հավասար է 0,5 դմ։ Դանել նըս
ծավալը։

166. Գտնել ուղղանկյուն պրիզմայի ծավալը, ևթե նրա հիմքում գտնվում է մի քառակուսի, վորի կողմն ե 3,1 սմ, իսկ պրիզմայի բարձրությունը հավասար ե 4,9 սմ:

167. Խաչքան կզբի 16250 խոր. մ կաղնու փալտը, յեթե
նրա տեսակարար կշիռն է 0,85.

168. Վորոշիլ 14.5 խոր. մ քարածիսի քաշը, լեթե նրա տեսակաբ կշիռն ե 1,3:

169. Վագոնը, վորի յերկարությունն է 6,4 մ, լայնությունը՝ 2,74 մ և բարձրությունը՝ 0,76 մ, բեռնում են քարածուխութեանը տունն քարածուխ կվերցնելու վաղոնը, յեթե քարածուխութեանը կարաբ կշիռն է 1,3:

170. Հաստոցավոր գնդացըի ժապավենը պարունակում ե
250 փամփուշտ՝ Ժապավենը գանվում ե տուփի մեջ; Վհրքան
կշռի լիք տուփը՝ յեթե յուրաքանչյուր գնդակ կշռում է 22,5 գր,
դատարկ ժապավենը՝ 0,9 կգ. և տուփը 1,2 կգ.

Տասնուրդական
կուռօքակների
բաժանումը

Կատարել հետևյալ դործողությունները.

171. 1) 3,6:10, 2) 97,4:100,

3) 128,5:1000, 4) 0,4:100,

$$5) \ 3,89 : 1000, \quad 6) \ 25,7 : 1000, \quad 7) \ 5,1 : 1000,$$

$$8) 0,64 : 1000, \quad 9) 0,017 : 1000,$$

$$172. \quad 1) \ 83:10, \quad 3) \ 275:100, \quad 5) \ 18000:1000,$$

$$2) \ 4:10, \quad 3) \ 61:100, \quad 6) \ 576:1000,$$

173. 1) 6,9:3, 4) 57,5:5, 2) 7,9:316, 10) 3,6:225,

2) 1,75:7, 5) 13,2:24, 8) 0,06:15, 11) 8,01,:9,

3) 0,48:6, 6) 0,7:25, 9) 11,9:14, 12) 61,72:158,

կատարել հետևյալ գործողությունները և ստուգել արդիունը՝ ըստ բարեկարգության:

ները.

- | | | |
|------------------|-----------------|------------------|
| 174. 1) $6:0,8,$ | 5) $160:0,016,$ | 9) $32:1,28,$ |
| 2) $1:0,05,$ | 6) $19:0,0608,$ | 10) $11:0,032$ |
